ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական կոտորածների և մասնավորապես 1915—1916 թթ. մեծ եղեռնի վերաբերյալ հրապարակվել են շատ նյութեր։ Հրապարակվել են ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներով։ Աննախընթաց ոճիրի մասին, սակայն, մեր արխիվների հարուստ ֆոնդերում կան ոչ թիչ փաստաթղթեր, որոնք դեռևս անծանոթ են մնացել ընթերցողների լայն շրջաններին։ Այդ նյութերից մի քանիսը, որ զգալի հետաքրքրություն են ներկայացնում, տպագրում ենք ստորև որոշ կրճատումներով։ Փաստաթղթերը պահվում են Հայկ. ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվում (ֆ. 57, ցուցակ 2, գ. գ. 666, 672, 689, 692) և Հայկ. ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվում (պրոֆ. Հեայի ֆոնդ)։

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Աբիմտահալերի պատրիարք Հովհաննես արքեպիսկ. Արշարունին կաթողիկոս Գեորգ Սուրենյանին

Կ. Գոյիս, 1912 թ., սեպտեմբերի 4

...Կսպասեինք ազգովին և լի հուսով, որ Օսմանյան Սահմանագրության հռչակումեն ետքը, որ քանդեց հայոց արյամբ ողողված բռնապետական նախորդ դրությունը, այլևս վերջ գտնեն այդ անլուր չարիքները, սակայն ցավոք սրտի կհարկադրվինք հաստատելու, որ իրաց վիճակը հայոց նկատմամբ որևէ նպաստավոր փոփոխություն չկրեց, և Ատանայի ահավոր կոտորածով սկսավ ա՛յնպիսի նոր շրջան մը, ուր անպակաս եղան ամենուրեք նորանոր չարագործությունք, որոց ի մասնավորի թատր դարձան վերջերս Վանա, Աղթամարա, Բաղեշի, Մշո և Սղերտի վիճակները։ Նոր ի նորո հասած հեռագրեր դուժեցին սպանության, ավարառության, առևանգումներու դեպքեր, և բռնագրոսիկ իսլամացումներ, նույնիսկ անչափահասներու, որք տեղական իշխանության պաշտոնեից աչքին առջև և անոնց անտարբերության, չբսենք գաղտնի համամտության կամ մեղսակցության շնորհիվ՝ ի գործ կդրվին մերադներից դեմ, որ անգեն ու անպաշտպան կգտնվին խուժդուժ ու գինյալ խուժանին առջև, խաղալիք թողված ասոր Թալեռանդական վայրագ կրից, որ դեռ ծարավն ունի իր երբեմնի կոտորածներուն և ավարները շարունակելու, և հսպառնա սպառսպուռ չքացնելու հայ ժողովուրդը, եթե անմիջական ու իրական միջոցներ ի գործ չդրվին պաշտպանելու համար զայն։

Քանի, քանի անգամներ Բ. Դռան ուշադրության և տնօրինության ներկայացուցած էր արդեն հայաբնակ նահանգներու ողբալի վիճակը, քանի քանի թապրիր մատուցած են Բ. Դռան, թե՛ հոդային գրավմանց խնդրույն կարգադրության համար, որ երկրագործ ժողովուրդը զրկած է իր ապրուստի միջոցեն,

և թե՛ այլազան հարստահարությանը վերջ տրվելու խնդրանք, և խոստումներ ընդունված, որպիսիք են՝ լիազոր Հանձնաժողով կարգել, ամեն ինչ ի տեղվոջ քննելու և ի գործ դնելու համար արդարությունը, զինվորական զորություն գրկել՝ զսպելու համար չարագործներու ոհմակը, բայց այս խոստմանը և ոչ մին գործագրվեցավ, մինչև որ իրերն եկան հասան ներկա դառնագին վիճակին. ուր հարկադրվեցանք վարչական պատգամավորության մը հետ դիմել Տերության բոլոր նախարարաց, պարզել իրաց վիճակն, և այս անգամ դառնացած հոգով ու ցարահատ, բուռն կերպով բողոք բառնալ այն չարագործությանց մասին. որ նույնիսկ սահմանադրական կառավարության օրով ի գործ կդրվին բազմաչարչար ժողովրդի մը դեմ. որու բաժին եղած է միշտ տառապիլը իր հայրենի հոգին վրա, և սակայն ընդհանուր երկրին զարգացման ու քաղաքակրթության մեկ գործեղ ազդակն եղած է, կատարելով իր քաղաքացիի ամեն պարտականություններն, և միշտ այս Տերության բարգավաճման ու զորության մեջ փնտրելով իր օգուտը։ Ըստ սովորականին դարձյալ խոստումներ եղան ազգու հրամաններ ուղղելու գավառական իշխանությանց, պատժելու և զսպելու չարագործները, հրամաններ՝ զորս փութացինք հաղորդել մեր Առաջնորդարաններուն և սակայն ի պատասխան Մուշեն, Բաղեշեն և Սղերդեն գուժաբեր հեռագրեր հասան մեզ նոր ի նորո ծանուցանող, թե ոչ մեկ գործադրություն տեղի չէ ունեցած, թե՛ վիճակն կշարունակե և թե ժողովուրդն մատնված է նույնիսկ ընդհանուր կոտորածի վտանգին։

Ահավասիկ, Վեհափառ Ս. Հայրապետ, այս է Թուրքիո Ձեր հոտին վիճակը՝ հարատև կեղեքում, անվերջ և անասելի տառապանք, անմեկնելի անտարբերություն կառավարության կողմե, հուզմունք ազգին մեջ, արտասահմանի ազգայիններու կողմե ալ բողոք և առաչարկ, դիմելու ուր որ անկե և հասկցնելու մեր վիճակը, լսելի ընել տալու մեր աղերսը և դարման մը ձեռք բերելու համար։

Ձեր Վեհափառության հրամանին համաձայն պարզելով իրաց այս վիճակը, նախ պարտավոր կզգանք զմեզ Ձեր Վեհափառության հայտնելու, թե ինչպես մեր նախորդներն, նույնպես և մենք չենք թերացած կատարելու մեր պարտականությունը և հետապնդելու։ կենաց, ընչից և պատվո ապահովություն հաստատել տալու համար հայաբնակ նահանգաց մեջ, և հետո ըստ որում մեր ձեռք առած միջոցներն այլևս ապահովություն չէր ազդեր մեզ փափագված արդյունքը հառաջ բերելու, ըստ որում Ձեր Վեհափառությունն իբր հայր հասարակաց կպահանջե մեզմե իր հոտին անդորրությունն ու ապահովությունն. և ըստ որում իր բարձր դիրքով և պաշտոնական հարաբերությանց դյուրությամբ և ընդհանուր կացության գիտակցությամբ ի վիճակի կգտնվի մեզ տալու կարևոր հրահանգներն, ցխնդրենք, որ շնորհ բերեք մեզ հաղորդել Ձեր խորհուրդն, որով կարելի պիտի լինի որոշել այն ուղղությունն, որու հետևիլ բանավոր և գործնական կրնա լինիլ և սատարել իրաց ելք մը դտնելու, որով և փրկելու զմեզ թե ազգին և թե Ձեր Վեհափառության առջև պատասխանատու մնալու դժբախտ հարկեն, և նույնիսկ խղճի խայթե, զոր կզդամք հանապազոր, տեսնելով Թուրքիո Ձեր հոկևոր հոտին տառապանքն, անոր անեցման համար ի գործ դրված անողոքելի ծրագիրը, և մեր աղերսներուն և բողոքներուն ապարդյուն մնալը...

2. Արևմտահայերի պատրիարք Հովհաննես սրբազան Արշարունին կաթողիկոս Գևորգ Սուրենյանին

Կ. Պոլիս, 1913 թ., մայիսի 24

Գավառական առաջնորդարանն հասած հավաստի տեղեկություններն իրազեկ լինելով, որ բնագավառի հայ ժողովրդյանս վիճակը հետզհետե կվատթարանա և հայկական ընդհ. կոտորածի մը վերահաս վտանգին տակ կգտնըվի, և մանավանդ նկատելով, որ, Սահմ. Օսմ. կառավարությունն ևս, համիտական կառավարության նման, հետևելով հայահալած դաղտնի քաղաքականության մը, Հայաստանը կուզե պարպել հայ ժողովրդեն, ուղղակի, բայց ավելի անուղղակի միջոցներով մղելով վշտաշարշար թշվառ հայությունը արտագաղթի,— նախապես խորհրդակցելե վերջ մեզ բարեկամ դեսպանատանց հետ, ստիպողաբար պետք տեսնվեցավ մասնավոր հիշատակագրով մը դիմել օսմ. կառավարության, հատուկ պատվիրակության միջոցավ, և մոտ 20 օր վերջ ևս, վերջին անգամ լինելով կարճ զեկույց մը հանձնեցինք անձամբ Ռ. Դոան կամ Մեծ Եպարքոսին և անմիջական դարման խնդրեցինք, ապագա ամեն պատասխանատվություն թողնելով կառավարության վրա, որոնց պատասխանները ներփակ կհղեմք ի Մայր Աթոռ։

Ազգ. կեդր. վարչության պատվ. խառն ժողովո որոշմամբ այս վճռական քայլը առնելե վերջ, Հայկական հարցով զբաղող պատկանյալ, ձեռնհաս և իրավասու հանձնաժողովներու որոշմամբ ևս հարկ դատվեցավ վերջին իրադարձությունները կարճ զեկույցով մը հաղորդել մեզ բարեկամ երյակ համաձայնության պետությանց մայրաքաղաքիս դեսպաններուն, անշուշտ միշտ խորհրդակցությամբ վսեմ. ռուս. դեսպանին, որ շատ շրջահայաց և հեռատես դիվանագետ մրն է։

Բայց թյուրիմացությանց տեղի չտալու համար կփութանք հավելուլ, որ Պատրիարքարանս օսմ. կառավարության հետ իր հարաբերությունները ոչ խզած է և ոչ ալ կփափաքի խզել, բայց հայաբնակ նահանգներու մեր դժբախտ ժողովրդյան անհանդուրժելի վիճակը հարկադրեց մեզ, որ ավելի զորավոր քաղաքականության մը հետևինք. օսմ. կառավարությունը մղելու համար, որ զգուշական անմիջական միջոցներ ձեռք առնելով, առջևն առնե քաղաքական ներքին փոթորիկներու, որոնցմե միշտ տուժողը եղած է մեր բյուրիցս թշվառ հայ ժողովուրդը...

3. Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Ն. Ֆիրսը արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին

Ռազմանի հեռագիր Կ. Պոլիս, 1914 թ., սեպտեմբերի 20

Генеральный консул в Эрзеруме телеграфирует: 18-го сентября начались большие маневры у русской границы. Мусульманам раздается оружие для предстоящей резни армян. Ввиду отмены капитуляций, будут резать [и] в помещении консульства, куда они укроются.

4. Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Ն. Գիրսը արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին

Գազետի հեռագիր *Կ. Պոլիս, 1914 թ., հոկտեմբերի 11*

Вице-консул в Баязете телеграфирует: Власти продолжают вооружать банды разбойников. Армяне в панике бегут в Россию, опасаясь резни, которую ждут со дня на день.

5. Կաթողիկոս Գևորգ Սուրենյանը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին

Քաղվածք հեռագրից *Էջմիածին, 1915 թ., ապրիլի 7*

По полученному телеграфному сообщению, подтвержденному другими источниками, происходит резня беззащитных обезоруженных армян— Эрзерума, Держане, Зейтуне и окрестностях; кровавые столкновения — Битлисе, Ване, Муше; насилия, грабежи, убийства — Егине, Киликии. Экономическое разорение всего армянского населения. Паства моя волнуется. Убедительно прошу Ваше Высокопревосходительство не отказать [в] дальнейшем гуманном покровительстве и защите моего народа в этот критический момент...

6. Նամակ՝ ուղարկված կաթողիկոս Գևորգ Սուրենյանին

Մանազկերտ, 1915 թ., մայիսի 28

Խնուսի, Ներքին Բուլանխի, Արծկեի, Ականցի, Բաղնոցի ու Անթապի աղետների մասին առաջին թղթակցությամբս արդեն դրած էի Ձեր վեհափառության, այս անգամ կուզեի լիակատար տեղեկագիր մը ղրկել, բայց ցավոք սրտի պետք է ասել, որ հիշյալ գավառակներեն ոչ ոք կրցավ անցնել մեր կողմերը. որպեսզի որակով ու քանակով կատարյալ տեղեկագիր մը կազմեինք հասցնեինք Ձեր վեհափառության։ Շատ որոշ է, որ այդ կողմերը հայ բնավ չեն թողուցեր, առանց խնայելու ու կարեկցելու սուրն անցուցեր են, եթե ազատվողները բլլային իրենց մյուս գավառակիցներու հետ հիմա շատունց զիրենց ձգեր էին այս կողմերը, բերելով իրենց սիրելի ու սիրականներու սրախողխող պատմությունները։ Մինչև հիմա Խնուսի 27 հայ գյուղերու 3322 տուն հայերեն ազատվեր են 128 մարդ. 50 մարդ Գոպալեն, 18 Կովան տուկեն, 50 Գարաչոպանեն և 10 հոգի ալ Գրրրմխայտայեն։ Ներքին Բուլանրգի 11 հայ գյուղերու 1000 տուներեն ընդամեն ազատվեր են 21 անձ. 10 անձ Դատկոնեն, 1 Ապրիեն, 2 Կեապոլանեն. 8 հոգին ալ Խոշկելտիեն, իսկ վերի Բուլանրգի 15 հայ գյուղերու 2225 տուն հայերեն ազատվեցին 40 հոգի Կոպեն. 1 Խարապաշեհրեն, 2 Սոնճալուեն, 55 անձ Գարսզրլեն, 325 անձ ալ Շերվանշեխեն. ընդամեն 423 հոգի։ Մանազկերտի 27 հայ գյուղերու ոմանք բրդախառն, 1089 տուներեն ազատվեր են՝ 15 անձ Տյուկնուկեն, 5 Նորատիեն,

12 Ռստամդետուկեն և 2 Հրսեից, զումար 34 անձ։ Խլաթա 24 հայ գյուղերու 2150 ընտանիքներեն ազատված են միայն 20 մարդ Շամիրամեն, 2 մարդ Թեղուտեն, 10 Տափավանքեն, 10 Մեծրեն, 5 Ծեղիրից, 15 Սպոռածորեն, 7 Մաղկեից, 1 Մատնավանքից, 2 Երսոնքից, 10 Խուլկա, 6 Խիարտանկից, 160 հոգի ալ Փրխուսեն, ընդամենը 248 անձ։

Փրխուսեն ազատվածները երեկվա գաղթականներով 160 հոգիի կհասնի. 130 հոգի կին ու երեխա երեկ եկան, Աստված իմ, ինչ տխուր տեսարան մը կներկայացուցնեին, ամենքն ալ մերկ ու բոբիկ քուրջեր ու մագե խարաչներ բրած էին իրենց ծածկույթ։ Երեսուն օրե հետե հաց բնավ չէին կերած, սնած էին բանջարներով ու բույսերով, կստարեյապես մեռելի դեմք ունեին, բոլորե էլ հիվանդ...

Նույն պատկերը դրեթե կներկայացնեն Արծկեի, Ականցի, Բաղնոցի ու Անթապի արկածյալները, հատկապես մարդ զրկված ու ստուգված է որ. հիշյալ գավառակներու մեջ ալ էրիկ մարդ չեն թողուցեր, ամենքն ալ սուրե անցուցեր են. դեղանիներն դերի տարեր են հետերնին, իսկ անպետները փախած Բաղնոցի կողմերը կթափառին։ Բաղնոցի մոտիկ Արծկեի ու Ականցի մի քանի գյուղերու վիճակագրությունն ալ կազմված է, Բաղնոցի ու Անթապի տեղեկագիրներու հետ ահավասիկ կներկայացնեմ Ձերդ Վեհափառության։

Արծկեի վիճակ

— Նորշրնճղ ունի 45 տուն հայ բնակիչ. սպանված է 123 մարդ։

— Գզլյուսուֆ 5 տուն հ. բնակիչ ունի. զոհերու թիվն է 5։ Իսկ բուն Արծկեի քաղաքին այժմ 2 հոգի միայն ազատվեր են։

— Սքանչելագործի վանքի զոհերու թիվն է 26. սպանված է նաև վանքի վանահայրը՝ Եղիշե վրդ. և վանքի բոլոր սրբություններն ալ կողոպտեր են։ Արծկեի մյուս գյուղերը ամայի դլալու համար մինչև հիմա մարդ չկրցի զրկել, հետո մյուս գյուղերու վնասները կգրեմ. երբ ստուգելու դլամ։

Արտիու (Ակուեց) վիճակ

— Գրակոմ ունի 33 տուն հայ բնակիչ, զոհերու թիվն է 61. գերիներու թիվը 13։

— Ջիրաբլու 25 տուն հայ բնակիչ ունի, սպանված են 50 մարդ, դերի տարված 15 կին ու աղջիկ։

— Քոչեր 50 տուն բնակիչ ունի, զոհ տվեր են 107 անձ. գերի տարված 22 հոգի։

— Նորշեն բնակիչ 24 տուն հայ. սպանված է 62 հոգի, գերի 5 հոգի, իսկ Ականց գյուղաքաղաքի զոհերու թիվը, ռուսներու պաշտոնյաներու տեղեկություններուն նայելու դլանք, 2300 անձի կհասնի հոգիներ։

Բաղնոցի հովիտ

— Բաղնոց 150 տուն հայ բնակիչ ունի, զոհերու թիվն է 104. գերիներուն 17։

— Խարապակորը 6 տ. բնակիչ ունի, սպանված է 11 անձ. գերի տարված 4։

— Ավթնա 12 տուն բնակիչ ունի, զոհ տված է 9 անձ. գերի տարված 5։

— Պանզտե 35 տուն բն. ունի, սպանված է 12 անձ։
— Մարմուս՝ տուն 20. սպանված 3 հոգի։
— Չիարեք՝ տուն 2, սպանված 2։

Վերապ

— Խարդալրդ՝ տուն 4, գոհ 3 անձ։
— Պոտո ունի 10 տուն բն. սպանված 13 անձ, գերի 5։
— Քեոշկ՝ 2 տուն հայ կար, 7 անձ սպանվեր է հոսս
— Մրլան՝ 2 տուն բնակիչ, սպանված 2 անձ։
— Շամե՝ տուն 2, սպանված 7 անձ։
— Տերիկ՝ տուն 7. սպանված 17 անձ։
— Խարախու՝ 4 տուն. գոհ տվեր են 14 անձ, իսկ գերի 1։

...Կոտորածներու գլուխը կանգնած էր ինք՝ կառավարությունը. եթե քյուրտ մը իր դրացի հայ պաշտպանելու ըլլար կառավարություն ինք կդրկեր սպանել կուտար ժանտարմաներու ձեռամբ. Խուլիկի, Շերվանշեխ ու Համզաշեխի հայերը, որ կպաշտպանվեին Խուլիկ և Սիմո անուն գյուղերու չերքեզներու կողմանե, կառավարությունը ինք զրկեր է ժանտարմաներ ու սպաննել տվեր է։ Նույնպես Խնուսի Գարաշոպան, Կովանտուկ, Գոբալան են գյուղերու ընտանիքները, որ փախած ու ապավինած էին Հասնանցի պապա անուն Թոսրնի գյուղը, նորեն Խնուսի կառավարության կողմանե, գայմագամ ինք անձամբ եկեր տարեր էր իր շահատակությունները ի գործ դրերե...

Մանազկերտի առաջնորդի փոխանորդ Հովհաննես քահանա
Տեր-Ավետիսյան

7. Արևմտահայերի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը ամերիկահայերի հոգևոր առաջնորդ ծ. վարդ. Վեհունուն

Կ. Պոլիս, 1915 թ., դեկտեմբերի 28

Ասկե առաջ Պուլկարիո գեր. Առաջնորդին հրահանգած էինք, որ մեր գրությանց պարունակությունը հաղորդեր նաև Ձեզի, Ամերիկայի հայությունը իրազեկ ընելու համար այն ահռելի եղեռնին, որ տեղի կունենար Թուրքիո մեջ ամբողջ ազգ մը բնաջինջ ընելու համար։ Պատմությունը չեմ կարծեր թե արձանագրած ըլլա այսպիսի կոտորած մը։ Լուրերը որքան ալ հասած ըլլան ձեզի, սակայն չեմ կարծեր թե որևէ գրիչ կամ բերան կարենա նկարագրել այն զարհուրելի նախճիրները, որոնք տեղի ունեցան վերջին 8—9 ամիսներուն մեջ Թուրքիո մեկ ծայրեն մինչև մյուս ծայրը, առանց խնայվելու ամենափոքր գյուղը կամ գառամյալ ծերունին և կաթնկեր մանուկը։ Համիտյան ռեժիմին ատեն կամ անկե առաջ տեղի ունեցած կոտորածները հայկական ըլլան կամ հունական, պուլկարական ըլլան թե լիբանյան՝ չնչին բան մըն են ասոր քով։ Այս անգամ գործադրվածը իսկապես բնաջնջումի ծրագիր մըն է, և այսօր որ անիկա ի գլուխ ելած է, այլևս կրնա ըսվիլ թե հայը իր հայրենիքին մեջ այլևս պատմական դարձած է, և արդեն կուսակալներեն ոմանք (Տիարպեքիրի Ռեշիտ, Պիթլիսի Ապտյուլխալրդ, Կարնո Թահսին և այլն) պարծանոք հեռագրեցին Կենտ. կառավարության, թե իրենց կառավարած նահանգներուն մեջ ոչ մի հայ կը գտնվի այլևս։ Այս անգամ խուժանը չէր,

որ հարձակվեցավ խաղաղ ժողովրդին վրա, այլ նույն ինքն կառավարությունը. որ իր ծրագիրը գործադրեց զինվորներու, ժանդարմներու, ոստիկաններու և մանավանդ հրոսախումբերու ձեռքով։ Հրահանգը կեդրոնեն տրվեցավ և ամեն կողմ գործադրվեցավ անխղճմտորեն։ Նախ մտավորական գործունյա և բանիբուն դասակարգը ձերբակալվելով բանտարկվեցավ, և անոնք որոնց մասին կարելի էր ամբաստանություն մը հերյուրել պատերազմական ատյաններու շուտ ընդ փույթ վճռովը կսխաղանի վրա իրենց կյանքը կնքեցին։ Ջենդի ամենաներելի տեսակն անգամ հավաքվեցավ և շատեր իրենց չունեցած սենքերուն համար իսկ դատապարտվեցան։ Ժողովուրդը վտարվեցավ իր հայրենի օճախեն, լքելով ամեն ինչ և ճամբան կողոպտվեցավ և կոտորվեցավ։ Սամսոնեն սկսյալ մինչև Տիգրանակերտ գրեթե հայ այր մարդ չէ ազատված։ Երիտասարդ կիներն ու աղջիկները առևանգվեցան ու մանուկները կոտորվեցան։ Կոտորածը ահռելի եղած է Մուշ, Բաղեշ, Տիգրանակերտ, Եդեսիա, Տրապիզոն, Շապին Գարահիսար, Քղի, Բալու և Երզնկա—Քեմախ, ուր գրեթե ոչ մեկ հայ ազատված է, մանուկներն ու ծերերն անգամ չխնայվելով։ Հայաստանի մյուս նահանգներեն ազատվածներ կան, սակայն հազիվ 5% համեմատությամբ։ Շատ մը քաղաքներե և գյուղերե հազիվ մեկ երկու կիներ կան այսօր։ Լեռներ ու բանուկ ճամբաներ դիակներով լեցվեցան։ Գետերը օրերով դիակներ տարին իրենց ալիքներուն հետ։ Նշանավոր եղան Մալաթիա և Խարբերդ, որոնց մոտերը կոտորվեցավ տեղացի հայությունը, նույն բախտին ենթարկվեցան մյուս գավառներեն եկող և անկե անցնող գաղթականաց բոլոր կարավանները։ Մուշ և իր դաշտը ուր հայ բնակչությունը Պուլանխի և Խնուսի հայության հետ տուներու և մարագներու մեջ լեցվելով կրակի տրվեցան. Բաղեշ և շրջակաները, ուրկե հայ մը ազատված ըլլալու լուրը չունինք տապվին, Տիգրանակերտի նահանգը ուր ոչ միայն հայերը այլև ասորիներն ու բաղդեացիներն ալ կոտորված են. և կուսակալին գրված ջարդի հրամանը չգործադրելնուն համար երեք թուրք գայմագամներ պաշտոնանկվելով սպանված են։ Տրապիզոն և շրջակաները, ուր հայությունը գրեթե ամբողջովին կոտորված կամ ծովամույն եղած է։ Բալու և Քղի՝ որոնցմե ոչ մեկ հայ ազատված ըլլալուն լուրը ունենք ցարդ։ Երզնկա և Քեմախ, ուր տեղացի հայությունը և Բարերդի, Դերջանի և Կարնո հայությունը Արածանին թափված, ողջամբ թաղված կամ կոտորված է։ Շապին Գարահիսար և Եդեսիա՝ ուր ժողովուրդը կամավ մեռնել չուզելով փորը ինչ դիմադրություն ընելու հանգրգռությունը ունեցավ։ Էնկյուրի, որուն արու հայությունը այդ նահանգը կանխավ Պոլսեն աքսորյալ հայերով միասին դեպ Եոզղատ տարվեցավ և ճամբան կոտորվեցավ։ Մանրամասնություններու վրա չեմ ծանրանար, ականատեսներու պատմությունները սյնպիսի գազանային դեպքեր կհիշեն, որ մարդկային պատմությունը երբեք չի արձանագրած նույնիսկ նախաքրիստոնեական դարերու մեջ։

Հայ ժողովուրդը իր դարավոր հայրենիքեն վտարվելով դեպի հարավ դշվեցավ. ճամբան շեթեներուն բյուրավոր զոհեր տալով, յուր ինչքը, եթե թույլ տրված էր բան մը առնել իրեն հետ, կողոպտվելով, օրերով ու ամիսներով հետիոտն ճամբորդեց։ Կարավանները հնադարյան գերիներու պես ամեն քաղաք հասնելուն հրապարակները շարվեցան և իսլամ ժողովուրդը հրավիրվեցավ անոնցմե իր հավնածը առնելու։ Այրերեն շատերը արդեն իրենց ծննդավայրին մեջ կոտորված ըլլալով, մնացյալներն ալ ճամբան կոտորվե-

յան չեթեներու և ժանդարմներու կողմե, մանուկները խլվեցան իրենց մայրերուն գրկեն և իրրև անտեր ապրանք իսլամներու հանձնվեցան (այս մասին նշանավոր եղավ Սեբաստիո Շար Գրշլա գավառակին կեդրոնը, ուրկե անցնող բոլոր հայ գաղթականաց մանուկները առնվեցան մայրերենն։ Երիտասարդ կին և աղջիկ գրեթե չմնաց որ չբռնաբարվեցավ, այնպես որ այդ բյուրավոր ժողովուրդին դուռն բեկորները միայն կրցան հասնել Միջագետք)։

Ճիհադը լիովին գործադրվեցավ այս երկրին մեջ, որովհետև հայերը իրրև օրենքե դուրս ձգված և իսլամության թշնամի ժողովուրդ մը նկատվեցան և անոնց կյանքը, պատիվը և ինչքը հելալ համարվեցան, սպանություն, բռնաբարություն և կողոպտում կրոնական պարտականություն մը եղան նույնիսկ պաշտոնական անձանց համար։ Ի սկզբան իսլամացումները չընդունվեցան կամ գանազան պայմաններով ընդունվեցան, օր. իսլամացողը իր ծննդավայրեն դուրս կառավարության հարմար տեսած տեղը բնակի, իր զավակները անմիջապես հանձնե իսլամական կրոնքով կրթվելու և մեծնալու համար, շուտով ամուսնական կապեր հաստատե իսլամ ընտանիքներու հետ և այլն։

Այս կերպով և ավելի հաճախ բռնի շատ տեղեր բազմաթիվ հայ ընտանիքներ կրոնափոխ եղան և ցայսօր կմնան այդպես։ Օրինակ, Կեսարիո գավառին մեջ 1000-ե ավելի ընտանիք, Սեբաստիո նահանգը (Եվդոկիա, Գանկալ, Շարգրշլա, Ամասիա և այլն) իրր 800 ընտանիք, Խարբերդի նահանգը (Խարբերդ, Արարկիր, Ակն, Մալաթիա) իրր 1000 ընտանիք։ Անպաշտոն իսլամացումները շուտով պաշտոնական դարձան և օգոստոսեն ի վեր սկսան պաշտոնական գործողություններ կատարվիլ և նույնիսկ պաշտոնական անձանց կողմե բրոպականդ և ճնշում ի գործ դրվիլ։ Զինվորներու ընտանիքները, որոնք քիչ տեղեր միայն տեղահան չեղան, իսլամ գյուղեր կղրկվին և հոն կրոնադատվին իսլամ կրոնը ընդունելու։ Հայ զինվորները ավելի խիստ ճնշումի ենթակա են և հազարավորներ արդեն իսլամացած են մահվան սպառնալիքով։ Զինվոր և սպա իսլամացնելու նույնիսկ պաշտոնական հրահանգ դրկված է զորաբանակներուն։ Սեբաստիա, Մալաթիա, Խարբերդ, Եվդոկիա և այլն որբանոցներ բացված են իրր թե «զինվորական նահատակներուն զավակները կրթելու համար», սակայն մեծամասնությունը հայ մանուկներն են։ Իսկ աղջիկները ամեն գյուղ և քաղաք նույնիսկ Պոլիս կվխտան իսլամներու տուներուն մեջ։

Վանքերն ու եկեղեցիները մեծ մասամբ կործանվեցան կամ անարգ գործածությանց հատկացվեցան. Մշո Ս. Կարապետը թնդանոթի բռնված և հիմնահատակ եղած է, նույնպես Կարնո Կարմիր Վանքը. Սեբաստիո Ս. Փրկիչ և Ս. Սարգիս եկեղեցիները և այլն։ Իսկ եկեղեցականությունը գրեթե սրբողջովին կոտորված է, ոչ մեկ քահանայի ողջ մնացած լլալուն լուրը ունենք ցարդ։ Առաջնորդներեն Կարնո Սմբատ եպ. Մաատեթյանը իր ժողովրդին հետ դեպի Միջագետք տարված ժամանակ Քեմախի մոտերը հրոսակներու կողմե սպանված է։ Տրապիզոնի Գեորգ ծ. վրդ. Թուրյան, Կարնո պատերազմական ատյանեն դրկված ըլլալով՝ ճամբան սպանված է։ Շապին Գարահիսարի Վադինակ ծ. վրդ. Թորեկյան քաղաքին ռմբակոծման ատեն զոհ գացած է։ Բաբերդի՝ Անանիա ծ. վրդ. Հաղարապետյան կախաղանի վրա իր հոգին ավանդած է տեղական վճիռով։ Մշո Վարգան ծ. վրդ. Հակորյան բանտին մեջ բրածեծ մահացած է։ Տիգրանակերտի Մկրտիչ ծ. վրդ. Զլղատյան բանտին մեջ գանահար սպանված է։ Եվդոկիո Շավարշ ծ. վրդ. Մահտիյան ծերբակալվելով

Սեբաստիա դրկված ատեն Ռամբան սպանված է. Խարբերդի Պսակ ծ. վրդ. Տեր Խորենյան շղթայակապ դեպ Տիգրանակերտ այլոց հետ դրկված ատեն խողխողված է. Եղղատի՝ Ներսես եպիս. Դանիելյան Սեբաստիո Մոտերը Ալիսի տփերուն վրա ուրիշ 450 եղղատցիներու հետ սպանված է. Եղեսիո Արտավազդ ծ. վրդ. Գալենտերյան քաղաքին մեջ սպանված է, ուրիշ 60—70 հայերու հետ վերջին ջարդեն առաջ՝ Բալուի՝ Եղնիկ եպս. Գալփտկյանի, Բաղեշի՝ Սուրեն ծ. վրդ. Գալեմյանի, Սղերդի՝ Եղիշե վրդ. Զանոյանի, Զարսանճագի՝ Գեորգ ծ. վրդ. Սալպանդյանի, Երզնկայի և Քեմախի, Մելքիսեդեկ վրդ. Հովիվյանի, Սամսոնի՝ Համազասպ ծ. վրդ. Եղիսեյանի և Կյուրենի՝ Խորեն եպս. Դիմաքսյանի մահը ստույգ է, բայց պարագաները տակավին անծանոթ կմնան։ Կեսարիո՝ Խոսրով եպ. Պեհրեկյան մշտնջենական և Պրուսայի՝ Պարգև ծ. վրդ. Դանիելյան հնգամյա բերդարգելության դատապարտված են, սակայն հայտնի չէ, թե ուր կգտնվին։ Նիկոմեդիո՝ Ստեփանոս եպս. Հովակիմյան, Գոնիայի՝ Բարեգին վարդ. Խաչատուրյան և Պանդրմայի՝ Կարապետ եպ. Մաշլրմյան տարագրված են իրենց հոտին հետ. և առաջինը Հալեպ. բ. Մոմպիճ, և գ-ը Քիլիսի Ազիզիյե գյուղը։ Ասոնցմե զատ ողջ մնացող Առաջնորդներն են. Գնել եպս. Գալեմքիարյան, որ կմնա Սեբաստիա տան մը մեջ արգելափակ, Իզմիրի Մատթեոս եպ. Ինճեյան և Հաճընի Պետրոս եպ. Սարաճյան՝ իրենց վիճակներուն մեջ։ Չխնայվեցավ նույնիսկ Կիլիկիո Սահակ Ս. Կաթողիկոսը, որ նախ Հալեպի բովերը Պապ աքսորվեցավ և ապա դրկվեցավ Երուսաղեմ, ուր կմնա այժմ։

Այս ընդհանուր գաղանային կոտորածեն մեր կորուստը մեկ միլիոնեն պակաս չէ. մնացյալ հայությունը ամբողջովին տեղահան եղած դեպ անապատները բշված է. բացի Պոլսո, Իզմիրի, Քեռթանիայի հայութենեն և բանի մը տեղ թողված զինվորի ընտանիք, բողոքական և կաթոլիկ հայերե։

Տեղահան եղողները գրեթե բան մը չեն կրցած առնել իրենց հետ, և իրենց առածն ալ շուտով տվին պաշտոնական ու անպաշտոն ավազակներու։ Պոլսո լրագրաց մեջ կարդացիք անշուշտ սեպտ. 14-ին հրատարակված օրենքը, որով հայոց կալվածներուն և գույքերուն գրավումը կօրինականացվի։ Օրենքը արդեն գործադրության տրված է հատկապես կազմված հանձնաժողովներու ձեռքով։ Ներքին գավառներեն Մուսուլեն Հալեպ և անկե Շամ և Քերեկ հասած հայության բեկորները, զանազան գյուղեր ցրված են, Պոլսո շրջականներեն և Կիլիկիայեն գացող հայությունը բանի մը ամիս ճանապարհներու, լեռներու վրա և երկաթուղիին երկայնքը հազարավոր զոհեր տվավ անոթության և հիվանդությանց և այս ալ Հալեպ հավաքվելով դրկվեցավ մյուսներուն հետ դեպ այն երկիրը, որ իրենց օտար է կլիմայով, լեզվով, կրոնքով, ազգով և բարքով։

Հալածանքը չէ դադարած տակավին, Պոլսո հայութենեն ցարդ 5000-ի չափ գավառացի և ամուրի... տարագրվեցավ, նույնպես Իզմիրեն իբրև 100 հոգի, և տակավին կշարունակվին։ Ցարդ Գոնիայի կողմերը մնացած իբրև 2000 ընտանիքները շրջակա գյուղերը ցրվեցան 5-ով — 10-ով, նույնպես ըրին ուրիշ տեղ գտնվողները, Տարսոն, Ատանա և այլն։ Ժողովուրդը տակավին շարժման մեջ կգտնվի, ոչ մեկ տեղ ապահով է. թե հոն պիտի մնա, Հալեպ գտնվողները դեպ առաջ կբշեն, Մումպիճ, Սրուճ գտնվողները այլուր կփոխադրեն, և այս բոլոր հալածանքը կրլլա որպեսզի ժողովուրդը կամ մեռնի կամ հուսահատելով իսլամանա։ Անապատներեն եկած լուրերը բար սիրտերն ունգամ արյունի կփոխեին, հայորդիներուն դիակները շուներու և գաղաննե-

րու կեր կրլլան, և թաղող մը անգամ չունին, այդ անապատներուն մեջ, ուր ...արարն ու քյուրդը ապրուստ չունի, հայուն բնական վախճանը սովամահ ըլլալն է. հայ կրթված կիներն ու աղջիկները... իբրև գերուհի կը ծառայեն ։ առուտուրի առարկա դարձած են։ Թիֆուսը և այլ հիվանդություններ արդեն նախճիրներ կգործեն և մեր վրա ոչ ոք կգթա տակավին։ Վայրի գազանները և երկնից գիշատիչ թռչունները հագեցան մեր մարմիններով, լեռները ներկվեցան մեր արյունով և ձորերը լեցվեցան մեր ոսկորներով, բայց տակավին մեր դահիճները չհագեցան և վագրերու պես իրենց զոհերը տանջելով կզվարճանան տակավին։ Այսքան անմեղներու արցունքը և ոչ իսկ կրցավ շարժել պղինձ դարձած երկինքը և ողորմություն անձրև մը տեղացնել։

Հայության բնաջնջումի այս ծրագիրը, որ վաղուց հղացված էր, գործադրության դրվեցավ պատրվակ բռնելով Վանա դեպքերը, Կովկասի սահմանագլուխի վրա մերայնոց ըրած շարժումները և իբր թե ներքին գավառներու մեջ Հայոց ապստամբելու մտադրությունը՝ որուն համար գինված է եղեր։ կասեցնելու համար կարելի միջոցները գործադրվեցան մեր կողմե։ Օսման. պետական անձնավորությունները հայտարարած էին, թե չպիտի թույլ տան, որ Հայաստան ալ եվրոպական նահանգներու նման ձեռքե ելնե։ Քարիթյուլասիոններու ջնջումով օսմ. կառավարությունը այլևս աղատ գտավ ինքզինքը, և գործեց անվերապահ և անվախ։ Համաձայնական տերությանց սպառնալիքները ոչ միայն արժեք չունեցան. այլև պատճառ ավելի սաստկացնելու հալածանքը։ Ներկա պատերազմին մեջ անոնց ունեցած անհաջողությունները մեր ազգին բնաջնջման ծրագիրը մինչև ցոլուխ տանելու համարձակություն տվին։

Օսմ. պաշտոնական և անպաշտոն անձնավորության մեր բոլոր թախանձանքներն ու լացերը անարժեք եղան։ Օտար չեզոք պետության անպաշտոն և կես պաշտոնական դիտողությունները ոչ մեկ ազդեցություն գործեցին։ Ամերիկյան դեսպանին և Պուլկար գործակատարին քանիցս ըրած դիտողությունները ոչ մեկ ազդեցություն գործեցին և չկրցան կասեցնել հալածանքը. զի օսմ. կառավարությունը Հայոց խնդիրը իրեն համար ներքին խնդիր նկատեց և Քարիթյուլասիոններու ջնջումով ոչ մեկ պետության իրավունք տվավ անոր միջամտելու։ Դեպքերը այնպես բերին, որ ոչ մեկ կառավարություն սպառնալից շեշտ մը գրավ իր բողոքներուն մեջ...

8. Ռուսական բանակի շտաբ-կապիտան Կրիմ Շամիլլի զեկուցագիրը Կովկասյան 2-րդ հրանգային դիվիզիայի հրամանատարին

Մուշ, 1916 թ., փետրվարի 14

Из опроса местных жителей как мусульман, так и уцелевших армян удалось выяснить пока вкратце положение Битлисского вилайета в период с начала войны до настоящих дней, причем мною излагаются только те факты, которые сходятся в показании и турок и армян, опрошенных в разное время и не сносившихся между собою...

Мобилизация была встречена населением с большим неудовольствием, и хотя еще не было известно, что война будет с Россией, но все на это указывало, и народ выражал опасение за исход этой войны.

Местными армянами была послана в Константинополь к патриарху телеграмма, в которой излагалась просьба указать, как быть христианам в случае войны с Россией, на что был получен ответ от патриарха, что подданные султана без различия вероисповедания должны подчиниться воле своего монарха, после чего армяне пошли в ряды турецкой армии, хотя были без всякой военной подготовки. Только в середине сентября, когда в Эрзеруме производили смотр войскам германские офицеры, от армян отобрали оружие, причем это было объяснено боязнью измены христиан мусульманской державы. После этого армян начали назначать в рабочие, обозные и другие вспомогательные ряды войск и одновременно началось массовое дезертирство армян из войск.

Армяне отбывали повинность неся службу и платя натурой военный налог, причем в строй брались все без исключения от 20 до 45-летнего возраста, а налог вносился ими в размере $^1/_3$ всего имевшегося у них запаса продовольствия, причем эта $^1/_3$ бралась несколько раз в течение самого короткого промежутка времени. Кончалось тем, что поселение обиралось буквально до последнего. Через месяц после обложения военным налогом христиан этим же налогом было обложено и остальное нехристианское население страны. Взятие Вана подало сигнал к началу резни, причем по Турции пошли слухи о том, что Ван взят армянами, что русские и турецкие армяне дерутся в рядах русских войск и поэтому христиан следует уничтожать. Слухи эти шли неизвестно откуда, но думаю, что в их распространении было одно лишь правительство. Представитель партии Единение и Прогресс в Муше Решид-бек, впоследствии начальник военной тайной разведки, явился деятельным организатором начавшейся резни и когда же к нему присоединился Азо-Мистобек, Мамед Кадым-бек и прибывший из Вана специально для этой цели Кязым-бек, командир жандармского ванского табора, весь вилайет был разделен на районы, а в каждом хозяйничал один из вышеназванных представителей власти, объединенных под общим руководством мушского мутесарифа Сарват-бека. Обыкновенно делалось так: вырывалась большая яма, к ее краям сгонялись женщины с детьми, и матерей заставляли сталкивать в эту яму детей, после этого яма засыпалась немного землей, далее на глазах связанных мужчин армян насиловались женщины и убивались, после всего этого убивались, наконец, мужчины, трупы заполняли яму почти доверху. Часть христиан сгонялась к реке и сбрасывалась с мостов в воду, причем выплывавшие ловились и сбрасывались вторично. В Евфрате и ближайшей к Мушу реке сейчас будет не менее 25 000 трупов армян (показание армян).

Против этого зверства запротестовало местное мусульманское духовенство, причем имам города шейх Авис Кадыр обратился лично к мутесарифу Сарват-беку, прося последнего уважать закон Магомета, разрешающего убивать только лиц мужского пола, способного носить оружие и сопротивляться, т. е. в периоде от 15—60 лет, на что в ответ получил угрозу быть арестованным и был обруган площадной бранью. После этого между городским духовенством и светскими властями началась враж-

да и духовенство отступилось от общественной жизни, в то же время духовенство начало укрывать у себя армян, подвергаясь штрафам и оскорблениям от губернатора и полиции. Среди оказавших покровительство были следующие лица: 1) имам города Муша шейх Авис Кадыр, 2) шейх Абдул Гамид, 3) богачи и знатные лица Джафар-ага с братом Надыр-ханом, Силжар-ага Мулла Оглы Гаджи Мамед-агой и родными Бсуф-агой и Кярим-агой, Али-ага Байрамдар-заде и 5) шейх Таги-оглы — последний курд племени бадачи из Сасуна, где он жил с армянами-повстанцами и, работавши с ними и за них в благодарность за помощь, когда-то ему оказанную армянами. Все перечисленные выше лица остались в городе до настоящего времени, кроме имама шейх-Кадыра. По показаниям армян, вообще духовенство все без исключения заступалось за них. Из числа армянских семейств некоторые были пощажены, но в каждую такую семью, [к] тем или другим, заслуживающим милость губернатора, поселялся один турок, являвшийся полным хозяином и господином и людей и имущества.

Все изложенное выше и касающееся резни относится к летнему периоду 1915 года, когда резня достигла особой интенсивности в связи с телеграммой, присланной из Константинополя шифром, куда она была продиктована из Берлина; в этом показании особенно сходятся и турки и армяне. Эта телеграмма сняла последние штрихи образа человеческого с правительства падишаха, и в Армении воскресли времена султана Абдул Гамида. Резня то затихала, то вспыхивала вновь и не угасала до последних дней пребывания турок в Муше...

9. Զեկուցում ազգային բյուրոյին

Թիֆլիս [1916 թ.]

Հայկական նահանգներու հայ ժողովրդի տեղահանումը

Մեր ստացած տեղեկություններու շրջանը կկազմե սկսյալ Տրապիզոնեն—Երզնկա, Տիգրանակերտ, Միջագետք և արեմուտք։

Հայկական նահանգներու տեղահանումը ամեն տեղ եղած է, վերին աստիճանի զգուշավոր, սիստեմաթիք և միօրինակ։

Ամեն տեղ ալ շնական խաբեբայությամբ, պատրաստած ցանկի մը համաձայն հավաքած են առաջադեմ մտավորականությունը—փրոֆեսոր, ուսուցիչ, փաստաբան, բժիշկ, հասարակական գործիչ... և ամենքը կլեցվին բանտերը։ Այսպիսով գրկելով հասարակությունը առաջնորդող տարրերեն, որմե հետո դյուրին պիտի ըլլար իրենց դիվային ծրագիրները հաջողությամբ գլուխ հանելու։

Այսպես ամբողջ մտավորականությունը արգելափակելե հետո կհավաքեն, թե քաղաքներու և թե գյուղերու ֆիզիքական ուժ ներկայացնող տարրերը և նույնպես կարգելափակեն, որմե հետո կսկսե նրանց արսորանքը գիշերամիջին, խումբ-խումբ և թևերը ետևին կապած զինված ժանդարմներու և դինվորներու ուղեկցությամբ։

Ամեն տեղի վրա կազմակերպած է եղեր չարդարար թուրք կամավորներու խումբեր, որոնք վիրին կարգադրությամբ կդրկվին որոշյալ վայրիր, կատարելու իրենց «հայրենասիրական գործունեություններ», կոտորելով անգեն և ձեռքերը ետեր կապված հայ աքսորականներու խումբերը։ Այդ վայրերը սկիզբեն կընտրվեին մութ անկյուններ և ամայի վայրեր· դա ի զգուշություն, սակայն հետո, արդեն լրացած և հանդուգն դարձած պետք չէին տեսնիր զգուշավորության և կկոտորեին ամեն տեղ։

Արգելափակվածները լրացնելե հետո, կարդր կուգար տակավին մնացած հայ արու աղդարնակչության 10 տարեկանեն վեր, որոնք անջատելով կիներեն է երեխաներեն կքշեին գանդան ուղղությամբ. անոնց հետ կրնկերանային կառավարության կողմե մասնավոր պատվիրակներ տեղին թուրք երևելիներեն ընտրված, որոնց պաշտոնն էր, քանի մը տասնյակ քիլոմեթր հեռացնելե հետո կողոպտել աքսորականներու բոլոր ընչքերը ե դարձնելու կառավարության որմե հետո կամ կգնդակահարվեին և կամ դետերը կթափվեին։ Իսկ կիները և երեխաները ոտարորիկ և կիսամերկ անողորմ ժանդարմի խարազանին տակ կքշվեին գանսուզան ուղղությամբ։ Մահմեդական աղդարնակչությանը իրավունք տրված էր ուզածին չափ ընտրելու ցանկացած կիներեն և երեխաներեն ամբողջ ճանապարհորդության ընթացքին մինչև Միջագետք։

Հայկական նահանգներու տեղահանությունը առաջին անդամ սկսավ Կարինեն և Երզնկայեն վերոհիշյալ սիստեմով որուն ականատես վկաները եղած էին դերմանացի երկու օրիորդներ որոնք կպատկանին դերմանական Թյուրքիո միսիոնին և որ պատերազմի ընթացքին ծառայած էին զինվորական հիվանդանոցները իբրև դթության քույրեր. նախ Կարին դոք. Թալ՚յանի հրսկողության տակ, իսկ հետո Երզնկա գերմանացի բժշկի մը հսկողության տակ, որոնք չհանդուրժելով եղած անարդարությունը հանդեպ հայերու հրապարակով հայտնած էին, որուն համար դերման բժիշկը զանոնք նեռած է փողոց իբրև դավաճաններ։ Անոնք կվկայեն թե, Կարնո տեղահանված կիները և երեխաները կհափշտակվեին մահմեդականներեն, այնպես ինչպես դառնուկները գայլերեն։ Տկարները և անգորները կիյնային ճանապարհին երկանքին և կմահանային, իսկ արուները կջարդվեին անխնա։ Երզնկայի տեղահանվածները թափված են «Կեմախ Դերեսի» (Ձոր) կոչված տեղը ուր Եփրատը սրընթաց կհոսի, նրանց կարծիքով քիչեր ողջ մնացած են։

Նույն վիճակին ենթարկված են ամբողջ Սև ծովի եզերքները սկսյալ Տրապիզոնեն մինչև Սամսոն։ Կրկնություն պիտի ըլլա միայն պատմությունը ընել։ Տրապիզոնի իտալական հյուպատոսը վերադարձին հայտնեց մեզի թե՝ Տրապիզոնի Ամերիկյան միսիոնարները հավաքած էին բավական թվով երկսեռ երեխաներ և չափահաս աղջիկներ։ Տեղահանությունը լրանալեն հետո հայտնված է վերոհիշյալներու գոյությունը։ Տեղացի թյուրքերե և օտարներե կկազմվի հանձնաժողով մը և կրանան որբանոց մը լեցնելու համար. երեխաները որբանոցը, իսկ չափահաս աղջիկներն ալ իբրև հոգատարներ։ Իթթիհատի Կեդրոնը՝ Ենվերեն իմանալով այդ կարգադրությունը, գայրացած կդրկե զինվորական պատվիրակ մը և զինվորական ատյանե սպառնալիքով կցրվե որբանոցը և չափահաս աղջիկները կլեցնե մասնավոր տուն մը բռնի ծառայեցնելու համար զինվորականներու անարգ կրքին։

Տիդրանակերտի մասին մեր ստացած տեղեկությունները չափազանց հակասական են, կպնդվեր, որ տեղի ունեցած է ուժեղ դիմադրություն, կպրնդ-

վեր նաև հակառակը թե բնավ դիմադրություն տեղի չէ ունեցած, սակայն իրողությունը այն է, որ վերջ ի վերջո անոնց ալ վիճակված է նույն վերջավորությունը։

Ծանոթ է արդեն ձեզի Մարզվանի և Շապին-Գարահիսարի դիմադրությունները. առաջինին մեջ թույլ ու անկազմակերպ, իսկ վերջինին մեջ ընդհակառակը — կազմակերպված, ուժեղ և փառավոր։

Խարբերդի տեղեկատուն հաղորդեց քստմնելի մանրամասնություններ։ այնտեղ նույնպես արգելված են բոլոր մտավորականները և ֆիզիքական ուժ ներկայացնող տարրերը, որմե հետո յուրաքանչյուր մեջգիշերին 50 առ 50 թևերը կապված կքշվին ու կկոտորվին։ Վերջին հիսնյակը, որ բանտին մեկ խուցին մեջ արգելափակված են եղեր և սրանք կներկայացնեին ամենաանձնվեր և հանդուգն գործիչ մտավորականները, փոխանակ երթալու կոտորվելու քստմնելի հերոսությամբ կրակի կուտան խուցը և կվառվին իրենք ալ միասին։

Կեռ. վարժարանի, ամերիկյան և ֆրանսիական քոլեճներու ամբողջ աշակերտությունը, որ բանակը տարված կաշխատեցնեին անգեն ծառայությունների և ճանապարհներու շինության, նույնպես կարգելափակեն շենքի մը մեջ, թվով 1300 և քանի մը օր հետո խիստ հսկողությամբ գիշերով կփոխադրեն իբր թե Ուրֆա, սակայն 40--50 քիլոմեթր հեռուն Քեյզին ըսված տեղը կգնդակահարեն և կթաղեն։

Ազգաբնակչության մնացած մասին հետ կվարվին այնպես, ինչպես մյուս տեղերում։

Երզնկայեն, Կարինեն հոն հասած երեխաներեն բավական թվով մնացած են Խարբերդ ու անոթի, մերկ կմախքացած կթափվին մեկ անկյունեն մյուսը։ Անցորդներեն հաց խնդրելով, շատեր չ տոկալով կիյնան այս կամ այն անկյունը. շարժվել անկարողներին քաղաքապետարանի կառքերը ողջ կվերցնեն աղբի հետ միասին և կնետեն աղբանոցները որտեղ աղբի դեղին տակ կթաղվին։

Վերջապես միևնույն պատկերը կտիրեր ամբողջ հայկական նահանգները։

Կիլիկիայի տեղեկանությունը

Կիլիկեցիները կանխատեսելով որ կառավարությունը պիտի սկսի հայերու հանդեպ թշնամանք, կորոշեն առաջին պատեհությամբ իսկ ամբողջապես դիմել ինքնապաշտպանության։ Այս լուրը Կիլիկիո Սահակ Կաթողիկոսը կիմանա. ենթադրելով ինքնապաշտպանության դիմելը կրնա աղետալի հետևաններ ունենալ ժողովրդի համար, Մարաշի առաջնորդի և Այնթապի բողոքական Երեցի ընկերակցությամբ կաշխատի համոզել ժողովուրդը որ չդիմե ինքնապաշտպանության և ինքը կառավարության կողմե հավաստիքներ կուտա։ Քաջ Մարզվան, որ 95-ի և 908-ի դեպքերու հերոսաբար դիմադրած էր, անձնատուր կրլլա և կտեղահանվի։

Զեյթունը, որ դարերով իր ըմբոստ և քաջ նկարագրով մնացած էր կիսանկախ և շատ անգամներ հաղթականորեն կռված էր 100000-ներու դեմ, այս անգամ կունենա իր ծոցին մեջ ներքին անհամաձայնություն, անձնատուրության ճերմակ դրոշակ կպարզե։ Երիտասարդության մեծ մասը չհամաձայնելով՝ քանի մը խումբերու բաժանված կմիանա արդեն լեռները ապաստանած «փախստական» զինվորներու, կառավարության ղրկած առանձին վաշտին

վրա կհարձակվին և ամբողջ կկոտորեն և կպրավեն զենքերը և ռազմամթերքը։ Կառավարությունը կզրկե ավելի մեծ թվով զինվորներ։ Անձնատուր եղած ազգաբնակչությունը արդեն փոխադրված էր Գոնիայի մեջ ճահճախուտ և վատառողջ վայր մը. այնտեղ կ՚սկսի դանազան տեսակի համաճարակներ, որտեղ գոյություն չուներ ոչ սնունդ, ոչ բնակարան, ոչ բժիշկ և դեղորայք։ Զինվորական ուժեղ շղթայի տակ առնված, ուժ զգացողները այդ դժոխքեն կուզեին խույս տալ խելագարորեն և կիյնային զինվորներուն գնդակին տակ։ Չեյթունը կլեցվի մահմեդական գաղթականներով և անունը փոխվելով կկոչվի Սուլեյմանիե։ Քանի մը շաբաթ հետո լեռը քաշված խմբերը դիշերով կիջնան և նորահաստատ բնակչությունը սրի կքաշեն...

Հաճընի մասին տեղեկություն չունեցանք բնավ։ Սրվեստիոյ լեռնականներուն մեջ նույնպես անհամաձայնություն կիյնա վերոհիշյալ պատճառով և քանի մը գյուղ անձնատուր կրլլան և տեղահանվելով կկոտորվին. մյուսները իմանալով եղելությունը կքաշվին լեռը քանի մը գյուղերով միասին և կկովին 50 օր քանի մը հազար կանոնավոր և անկանոն զինվորներու և թնդանոթներու դեմ։ Արդեն պատմությունը ձեզի ծանոթ է թե ինչպե՞ս Եգիպտոս ապաստանեցան...

Արևմտյան Փոքր-Ասիո և Թրակիո հայերու տեղահանությունը

Ամենեն առաջ սկսվեց Էնկյուրիի տեղահանությունը, առաջին պատեհությամբ հավաքած են հայ լուսավորչական արու բնակչությունը թվով մինչև 800 և աքսորած են Կեսարիո ուղղությամբ, 40 քիլոմեթր հեռու ձորի մեջ կանուխեն պատրաստած չեթեներու խումբ մը դուրս կուգա և ամբողջապես կկոտորե կացիններով, սուրերով և բիհերով։ Հետո կհավաքեն կաթոլիկ արուները, նույնպես կղրկվին դեպի Կեսարիա և անկե Գոնիա... քանի մը օր հետո կհավաքեն բոլոր կանայք և երեխաները, կլեցնեն ապրանքատար վագոններու մեջ և շաբաթ մը կայարանը անոթի և ծարավ պահելեն հետո ճամբա կհանեն դեպի Գոնիա...

Տեղահանված են բոլոր շրջանները, բացի Իզմիրեն և Պոլսեն։ Պոլսեն քշվեցան բոլոր այն հավատի պանդուխտները, որոնք ընտանիքով չէին, նույնպես դացած են Գոնիա։

Այս շրջանին մեջ ինքնապաշտպանության դիմած են Զեյթունի և Պանդրրմա, որտեղ հերոսական կռիվներե հետո բոլոր արուները կոտորված են։ Մնացյալ ամբողջ ազգաբնակչությունը տեղավորված են Աֆիոն Գարահիսար, Էսկիշեհիր, Էրեյլի, Գոնիա, Պոզանթի, Քյոթանիո և մինչև Տարսոն։ Տեղեկությունները շատ վատ գույներով կնկարագրեին նրանց վիճակը, բացությա և վրաններու տակ. կնախատեսեին որ ձմեռը սարսափելի վիճակի պիտի ենթարկվին։

Հոն փոխադրվեցավ նաև Թրակիո, Ռոսոստոյի և Պոլկարայի ազգաբնակչությունը...

Տեղահանվածներու շարժական և անշարժ կալվածներու հարուցիս գրավումը

1915 սեպտ. 13-ի օրենքով հարքունիս կգրավվի բոլոր տեղահանվածներու շարժական և անշարժ ստացվածքները։ Պոլսո մեջ կազմվեցան 4 հանձնաժողովներ, մին Նիկոմիդիա, ուրիշ մը Կիլիկիա, և երկուսն ալ արևմտյան և արե-

վելյան հայկական նահանգների տեղվույն վրա կատարելու գրավման գործողությունները։

Թյուրքաճաղ ժողովրդի մեացուցիչներուն ենթադրական բիվը

Մեր կարծիքով հենված վերոհիշյալ տեղեկություններուն վրա, տաճկահայկական նահանգներեն չնչին տոկոս մը միայն հասած կլինի Միջագետք, որոնց կացություն այնքան գէշ է, որ կփորձինք մտածել թե շատ չնչին թվով ժողովուրդ պիտի գտնենք, եթե անոնք ալ չկոտորվին թյուրքերու նահանջին պահուն..

Հետևյալ ցանկը կարելի է ենթադրել մնացորդներու նկատմամբ։

Միջագետքի մեջ հայկական նահանգներեն . . .	100,000
Կիլիկիայի մնացորդները	100,000
Նիկոմիդիո և Թրակիո տեղահանվածներ	150,000
Պոլիս և Զմյուռնիա ; տեղահանվածներ	180,000
Ընդհանուր գումար	530,000

. . . . . .

ԱՍԱՍՈՒԹԻՒ